ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 1 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք.Երևան 12.01.2022թ.

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (Ինստիտուտ) Հոգաբարձուների խորհրդի հերթական նիստն անցկացվեց առկա եղանակով Ինստիտուտի գիտական խորհրդի նիստերի դահլիճում (ք. Երևան, Ալեք Մանուկյան 11, 2–րդ մասնաշենք, 3–րդ հարկ): Նիստին ներկա էին հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 20 անդամներից 18–ը:

1. Կարեն Գիլոյան –ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ
2. Գոհար Մամիկոնյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ
3. Սերգեյ Աբրահամյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարության զանգվածային սպորտի և ֆիզիկական դաստիարակության բաժնի պետ
4. Արսեն Հակոբյան- ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության ուսանողների աջակցության բաժնի պետ
5. Սամվել Գևորգյան- Ն.Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն
6. Հարություն Յավրյան –ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ
7. Ռոբերտ Պետրոսյան- Հայաստանի ըմբշամարտի ֆեդերացիայի նախագահ
8. Դավիթ Մոսինյան-«Հակադոպինգային գործակալություն»ՊՈԱԿ –ի տնօրեն
9. Մարտին Ալիխանյան-ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս

10. Անահիտ Բարսեղյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս
11. Մխիթար Խաչատրյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս
12. Եղիշե Դավթյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի մարզախաղերի ամբիոնի դասախոս
13. Վարինկա Ավագիմյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս
14. Դիաննա Ալեքսանյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի ուսանող
15. Մերուժան Սարգսյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի ուսանող
16. Յուրի Իսրաելյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող
17. Արմեն Պանչուլազյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետի ուսանող
18. Գայանե Չիլոյան- ՀՖԿՍՊԻ հիմնադրամի մարզչամանկավարժական ֆակուլտետի ուսանող

Նիստից բացակայում էին Նաիրի Սարգսյանը, Էդուարդ Քալանթարյանը,

Նիստին հրավիրված էին՝ Անժելա Նուշիկյանը, Արամ Գևորգյանը, Լուսինե Ստեփանյանը

Գրանցման թերթիկը և նիստի ձայնագրությունը լազերային կրիչով կցվում է:

Ապահովված էր նիստի քվորումը:

Նիստն արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Յուրի Իսրաելյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 12.08.2022թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 1 հերթական նիստի օրակարգի հաստատում:
2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն:

(զեկուցող՝ Հարություն Յավրյան)

3. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի ընտրություն

(զեկուցող՝ Հարություն Յավրյան)

Նիստից առաջ ելույթ ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտոր՝ Դավիթ Խիթարյանը, ով շնորհավորեց խորհրդի նոր կազմին, միաժամանակ հայտնեց, որ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 22.12.2021 թվականին գիտական խորհրդի կողմից կայացվել է որոշում ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ Հարություն Յավրյանին պարգևատրել Ինստիտուտի հիմնադիր ռեկտոր Հայկ Փարսադանյանի անվան հուշամեդալով:

Համաձայն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 3.7 կետի՝ նիստը սկզբում նախագահում էին խորհրդի ամենատարեց անդամը՝ ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ՝ Հարություն Յավրյանը, իսկ քարտուղարի պարտականություններն իրականացնում էր ամենաերիտասարդ անդամը՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանող Յուրի Իսրաելյանը: Նիստի նախագահողը տեղեկացրեց, որ Խորհրդի բոլոր անդամներին նախապես ուղարկվել է նիստի օրակարգը:

1. Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ Խորհրդի ավագ անդամ Հարություն Յավրյան)

Խորհրդի նիստը նախագահող Հարություն Յավրյանը առաջարկեց հաստատել նիստի օրակարգը:

Այլ առաջարկություններ և հատուկ կարծիք չհնչեց:

Օրակարգի հարցերը դրվեց բաց քվեարկության: Օրակարգին կողմ քվեարկեցին՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Օրակարգն ընդունվեց միաձայն:

2. Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող՝ Հարություն Յավրյան)

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն ՀՀ վարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 1414-Ա որոշման փոփոխվել է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը: Եվ համաձայն ՀՀ օրենսդրության, բուհի կանոնադրության և հոգաբարձուների խորհրդի կանոնակարգի 3.11 կետի հոգաբարձուների խորհրդի անդամների մեկ երրորդի առաջարկով հրավիրվել է հոգաբարձուների խորհրդի նիստ համաձայն օրակարգի:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձունների խորհրդի նախագահի ընտրություն: Ելույթ ունեցավ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ուսանող Դիաննա Ալեքսանյանը և առաջարկեց Կարեն Գիլոյանի թեկնածությունը: Ելույթով հանդես եկավ նաև ՀՀ ԿԳՄՍ նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ՝ Գոհար Մամիկոնյանը, ելույթով հանդես եկավ նաև ՀՀ սպորտի վաստակավոր գործիչ՝ Հարություն Յավրյանը, նշեցին որ պաշտպանում են Կարեն Գիլոյանի թեկնածությունը և իրենք ևս պետք է առաջադրեին վերջինիս թեկնածությունը, հաշվի առնելով նրա կենսագրությունը և աշխատանքային փորձը, ինչպես սպորտի՝ այնպես էլ կառավարման բնագավառում:

Ելույթ ունեցավ Կարեն Գիլոյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար, ասաց որ իր համար բարձր պատիվ է ստանձնել հոգաբարձունների խորհրդի նախագահի պաշտոնը և հույս հայտնեց, որ համատեղ աշխատանքով պետք է հասնեն առավելագույն արդյունքների:

Հարցեր և հատուկ կարծիք չհնչեց:

Կարեն Գիլոյանին հոգաբարձունների խորհրդի նախագահ ընտրելու վերաբերյալ հարցը դրվեց բաց քվեարկության:

Հարցին կողմի քվեարկեցին 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց հոգաբարձունների խորհրդի նախագահ ընտրել Կարեն Գիլոյանին:

3. Օրակարգի երկրորդ հարց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձունների խորհրդի քարտուղարի ընտրություն (զեկուցող՝ Կարեն Գիլոյան)

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանը առաջադրեց Ինստիտուտի հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս Վարինկա Ավագիմյանի թեկնածությունը, հայտնելով որ Վարինկա Ավագիմյանը ունենալով բարձրագույն իրավաբանական կրթություն ավելի արդյունավետ գործունեություն կծավալի բուհի առջև դրված խնդիրների լուծման համար:

Վ.Ավագիմյանը հայտնեց, որ պատրաստ է ստանձնել պաշտոնը հայտնեց, որ իր աշխատանքային փորձով մոտ է կրթական հաստատությունների հետ աշխատանքներին, աշխատել է ինչպես հիմնադրամներում, այնպես էլ տարբեր կազմակերպաիրավական ձև ունեցող կազմակերպություններում, պատկերացնում է ոլորտի իրավական կարգավորումների առանձնահատկությունները:

Հարցեր և հատուկ կարծիք չհնչեց:

Վարինկա Ավագիմյանին հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրելու վերաբերյալ հարցը դրվեց բաց քվեարկության:

Երրորդ հարցին կողմ քվեարկեց 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Որոշվեց «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրել Վարինկա Ավագիմյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Կարեն Գիլոյանը հայտնեց, որ համաձայն կանոնակարգի ռեկտորի առաջարկությամբ անհրաժեշտ է հրավիրվել հոգաբարձուների խորհրդի նիստ խորհրդին ենթակա մի շարք հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար:

Որոշվեց հոգաբարձուների խորհրդի հաջորդ նիստը անցկացնել սույն թվականի հունվարի 19-ին ժամը 17:00-ին Ալեք Մանուկյան 11 հասցեում:

Խորհրդի նիստը նախագահող Կարեն Գիլոյան

Խորհրդի քարտուղար Վարինկա Ավագիմյան